Սպառողների իրավունքների պաշտպանություն և առողջության պահպանում

1. Սպառողներին տրամադրվող տեղեկատվություն

Ներածություն

Սպառողներին տրամադրվող տեղեկատվության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին, մասնավորապես, ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում սպառողների իրավունքների պաշտպանության իրավական կարգավորում շփոթեցնող գովազդի դեպքում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությունում արտացոլված չեն համակարգված գործողություններ հանրային առողջապահության ոլորտում:

Ծրագրով նախատեսվում է «Սպառողներին տրամադրվող տեղեկատվություն» բաժինը մինչև 2008 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

Ազգային ծրագրի շրջանակներում սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում շփոթեցնող գովազդի վերահսկման[1] օրենսդրական կարգավորման բացը լրացնելու նպատակով կմշակվի օրենքի նախագիծ, որով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Գովազդի մասին» ՀՀ օրենքում[2]:

Հանրային առողջապահության ոլորտում 2002թ. սեպտեմբերի 23-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի «Համայնքի 2003-2008 թվականների գործողությունների ծրագրի հաստատման մասին» թիվ 1786/2002/EC որոշման հիման վրա կմշակվի ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ:

Սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով ՀՀ առողջապահության, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ՝ գովազդի և հանրային առողջապահության վերաբերյալ:

---

[1] 1984թ. սեպտեմբերի 10-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 84/450/ EEC՝ «Շփոթեցնող գովազդի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգադրությունների և վարչական դրույթների մոտեցման մասին»:

[2] ՀՕ-55, 30.04.1995թ.:

1.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2006						
1.	«Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1984թ. սեպտեմբերի 10-ի «Շփոթեցնող գովազդի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգադրությունների և վարչական դրույթների մոտեցման մասին» Խորհրդի թիվ 84/450/ EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով , ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով)	4-րդ եռամսյակ	15	Փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	

1.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[3]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առողջապահություն նախարարություն		«Հանրային առողջապահության մասին» դասընթացներ (2007թ. 2 օր)	խորհրդատվություն, փորձաքննություն
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով		«Գովազդի մասին» (2007թ. 10օր)	խորհրդատվություն, փորձաքննություն

[3] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ:

1.1.3.Քաղաքականության համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	ԵՄ տեխնիկական աջակցություն
2007						
1.	Համապատասխան իրավական ակտ	2002 թ. սեպտեմբերի 23-ի «Հանրային առողջապահության ոլորտում Համայնքի 2003-2008 թվականների գործողությունների ծրագրի հաստատման մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 1786/2002/EC որոշում	ՀՀ առողջապահություն նախարարություն	1-ին եռամսյակ	21	վերապատրաստում, փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					21	

2. Սպառողների իրավունքների պաշտպանություն

Ներածություն

Սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին:

ԵՄ օրենսդրությունը առաջարկում է սպառողների իրավունքների ավելի բարձր մակարդակ, քան նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթները որոշ մասով համապատասխանում են ԵՄ դիրեկտիվների պահանջներին, մասնավորապես, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքը սահմանում է սպառողների իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքները, սպառողների կողմից պատշաճ որակի և նրանց կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ձեռքբերման, սպառողներին տեղեկատվության տրամադրման պարտավորությունը, սպառողների շահերի պետական և հասարակական պաշտպանության և այլ իրավունքները, սակայն ԵՄ օրենսդրությունը առաջարկում է սպառողների իրավունքների պաշտպանության երաշխիքներ, որոնք նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ:

Ծրագրով նախատեսվում է սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

Սպառողների շահերի պաշտպանությունից ելնելով՝ սննդամթերքի անվտանգությանը վերաբերող ընդհանուր սկզբունքների և պահանջների[4] վերաբերյալ ԵՄ օրենսդրական պահանջներին ազգային օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն հետևյալ օրենքներում՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Ստանդարտացման մասին»[5], ինչպես նաև անհրաժեշտություն կառաջանա Եվրոպական սննդամթերքի անվտանգության լիազոր մարմնի պարտականություններով օժտված ՀՀ համապատասխան մարմին հիմնելու համար:

2007 թվական

2007 թվականին Ազգային ծրագրի շրջանակներում գենետիկորեն փոփոխված օրգանիզմների[6] հետ կապված հիմնահարցերը կարգավորելու և սպառողների շահերը պաշտպանելու նպատակով օրենսդրական համապատասխանեցման գերակայություն կհանդիսանա «Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը:

Սպառողներին խոտան ապրանքներից և ապրանքների թերությունների հետևանքով ստացված վնասից պաշտպանելու[7] նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում[8]:

Ինստիտուցիոնալ կարողություններ

Ընդունված իրավական ակտերի կիրարկումն ապահովելու նպատակով, համաձայն 2002թ. հունվարի 28-ի՝ «Սննդամթերքի մասին օրենքի ընդհանուր սկզբունքները և պահանջները սահմանելու, Եվրոպական սննդամթերքի անվտանգության լիազոր մարմին հիմնելու և սննդամթերքի անվտանգությանը վերաբերող ընդհանուր սկզբունքներ և պահանջներ սահմանելու մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 178/2002 կանոնակարգի, 2007 թվականի երրորդ եռամսյակում «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքում կկատարվեն համապատասխան

---

[4] 2002թ. հունվարի 28-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կանոնակարգ թիվ 178/2002՝ «Սննդամթերքի մասին օրենքի ընդհանուր սկզբունքները և պահանջները սահմանելու, Եվրոպական սննդամթերքի անվտանգության լիազոր մարմին հիմնելու և սննդամթերքի անվտանգությանը վերաբերող ընդհանուր սկզբունքներ և պահանջներ սահմանելու մասին»:

[5] ՀՕ-197, 26.06.2001թ.,
ՀՕ-25, 08.12.1999թ.,
ՀՕ-18, 09.11.1999թ.:

[6] 2001թ. մարտի 12-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/18/EEC՝ «Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների շրջակա միջավայր կանխամտածված բացթողնման մասին»:

[7] 1985թ. հուլիսի 25-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 85/374/EEC՝ «Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի պատասխանատվության վերաբերյալ անդամ երկրների օրենքների կարգավորող և վարչական դրույթների մոտեցման մասին»:

[8] ՀՕ-197, 26.06.2001թ.:

փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ «Սննդամթերքի անվտանգության գործակալություն ստեղծելու վերաբերյալ»:

2008 թվական

ԵՄ պահանջների համաձայն՝ սպառողներին երաշխավորելու նպատակով, որ շուկայում տեղակայված ապրանքները անվտանգ են[9], փոփոխություններ և լրացումներ կկատարվեն հետևյալ ՀՀ օրենքներում՝ «Համապատասխանության գնահատման մասին», «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին»[10], ինչպես նաև կմշակվի «Ապրանքների ընդհանուր անվտանգության մասին» օրենքի նոր նախագիծ:

Ինստիտուցիոնալ կարողություններ

Ընդունված իրավական ակտերի կիրարկումն ապահովելու նպատակով, համաձայն 2002թ. հունվարի 28-ի՝ «Սննդամթերքի մասին օրենքի ընդհանուր սկզբունքները և պահանջները սահմանելու, Եվրոպական սննդամթերքի անվտանգության լիազոր մարմին հիմնելու և սննդամթերքի անվտանգությանը վերաբերող ընդհանուր սկզբունքներ և պահանջներ սահմանելու մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 178/2002 կանոնակարգի, 2008 թվականի երրորդ եռամսյակում «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ «Սննդամթերքի անվտանգության գործակալություն ստեղծելու վերաբերյալ»:

Սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառի օրենսդրության համապատասխանեցումն արդյունավետ իրականացնելու նպատակով ՀՀ առողջապահության, ՀՀ բնապահպանության, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների շրջակա միջավայր կանխամտածված բացթողնման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին»:

---

[9] 2001 թվականի դեկտեմբերի 3-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/95/EC՝ «Ապրանքների ընդհանուր անվտանգության մասին»:

[10] 2004թ. մայիսի 26-ի՝ «Համապատասխանության գնահատման մասին» ՀՕ-197 ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում,

2000թ. մայիսի 17-ի՝ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՕ-60 ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում,

2001թ. հունիսի 26-ի՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՕ-197 ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում:

2.1.Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2006						
1.	• «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2002թ. հունվարի 28-ի «Սննդամթերքի մասին օրենքի ընդհանուր սկզբունքները և պահանջները սահմանելու, Եվրոպական սննդամթերքի անվտանգության լիազոր մարմին հիմնելու և սննդամթերքի անվտանգությանը վերաբերող ընդհանուր սկզբունքներ և պահանջներ սահմանելու մասին» Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի թիվ 178/2002 կանոնակարգ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	138	փորձաքննության
ԸՆԴԱՄԵՆԸ					138	
2007						
2.	«Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների մասին» կառավարության որոշման նախագծի մշակում	2001թ. մարտի 12-ի «Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների շրջակա միջավայր կանխամտածված բաց թողնման մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2001/18/EEC դիրեկտիվ	ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	1-ին եռամսյակ	100	Վերապատրաստում, փորձաքննություն
3.	«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1985թ. հուլիսի 25-ի «Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի պատասխանատվության վերաբերյալ անդամ երկրների օրենքների կարգավորող և վարչական դրույթների մոտարկման մասին»	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	15	Վերապատրաստում, փորձաքննություն

		Խորհրդի թիվ 85/374/EEC դիրեկտիվ				
ԸՆԴԱՄԵՆԸ					115	
2008						
4.	• «Ապրանքների ընդհանուր անվտանգության մասին» օրենքի նախագծի մշակում • «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2001թ. դեկտեմբերի 3-ի «Ապրանքները ընդհանուր անվտանգության մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2001/95/EC դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	2-րդ եռամսյակ	31	Փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					31	
					284	

2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[11]

0 NN ը/կ	1 Հաստատություն	2 Վերակազմակերպում	3 Վերապատրաստման կարիքներ	4 Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	-	Խորհրդատվություն, փորձաքննություն
2.	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	Սննդամթերքի անվտանգության գործակալության ստեղծում (2007թ.3-րդ եռամսյակ)	«Սննդամթերքի անվտանգության մասին» դասընթացներ (2007թ. 15օր)	Խորհրդատվություն, փորձաքննություն
3.	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	-	«Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների շրջակա միջավայր ինքնակամ բաց թողնման մասին» դասընթացներ (2007թ. 3 օր)	Խորհրդատվություն, փորձաքննություն
4.	ՀՀ առողջապահության նախարարություն	-	«Սննդամթերքի անվտանգության մասին» դասընթացներ (2007թ. 15օր)	Խորհրդատվություն, փորձաքննություն

[11] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ:

3. Սպառողների տնտեսական և իրավական շահերի պաշտպանություն

Ներածություն

Սպառողների տնտեսական և իրավական շահերի պաշտպանության մասին ՀՀ գործող օրենսդրությունն ընդգրկում է Քաղաքացիական օրենսգիրքը[12], «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին»[13], «Առևտրի և ծառայությունների մասին»[14] ՀՀ օրենքները, ինչպես նաև այլ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Սպառողների տնտեսական և իրավական շահերի պաշտպանության բնագավառի ազգային օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին: Օրենսդրության անհամապատասխանությունը ԵՄ օրենսդրության պահանջներին պայմանավորված է նաև որոշակի ծառայություններ և ապրանքներ իրացնող սպառողների իրավունքների պաշտպանությունը երաշխավորող իրավական ակտերի բացակայությամբ: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում սպառողների իրավունքների պաշտպանության պատշաճ իրավական կարգավորում հետևյալ դեպքերում՝ առևտրային կետերից դուրս կնքված պայմանագրերի, սպառողական պայմանագրերում անազնիվ պայմանների, սպառողական վարկերի տրամադրման, շփոթեցնող գովազդի, տարածության վրա կնքվող պայմանագրերի, ժամանակավոր հիմունքներով անշարժ գույքի օգտագործման իրավունքի գնման դեպքերում:

ՀՀ օրենսդրությունը հստակ չի սահմանում նաև ուղևորների և նրանց ուղեբեռների նկատմամբ օդային առաքողների պատասխանատվությունը և սպառողների շահերի պաշտպանության նպատակով հայցի ապահովման միջոցների առանձնահատկությունները:

Ծրագրով նախատեսվում է սպառողների տնտեսական և իրավական շահերի պաշտպանության բնագավառը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

Եվրամիության անդամ երկրների սպառողական վարկերի վերաբերյալ օրենքներին, կարգադրություններին և վարչական դրույթներին ՀՀ օրենսդրության համապատասխանեցման, ինչպես նաև սպառողական պայմանագրերում անազնիվ պայմանների[15], վերահսկման նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին»[16] ՀՀ օրենքում և կմշակվի «Սպառողական վարկերի մասին» օրենքի նախագիծ:

2007 թվական

2007 թվականի ընթացքում Ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի սպառողների տնտեսական և իրավական շահերի պաշտպանության բնագավառի ԵՄ օրենսդրությանը, մասնավորապես, ուղևորների և նրանց ուղեբեռների[17], սպառողների շահերի պաշտպանության, մասնավորապես, առևտրային կետերից դուրս կնքված պայմանագրերի[18], ինչպես նաև անշարժ գույքի օգտագործման իրավունքի գնման[19] պայմանագրերի ոլորտներում:

ԵՄ պահանջներին համապատասխան՝ ուղևորների և նրանց ուղեբեռների նկատմամբ օդային առաքողների պարտականությունների սահմանման նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում[20]: ԵՄ օրենսդրությանը համապատասխան՝ տնտեսության բոլոր ճյուղերում սպառողների շահերի պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաև

---

[12] ՀՕ-239, 05.05.1998թ.:
[13] ՀՕ-197, 26.06.2001թ.:
[14] ՀՕ-134, 24.11.2004թ.:
[15] 1986թ. դեկտեմբերի 22-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 87/102/EEC՝ «Սպառողական վարկերի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգադրությունների և վարչական դրույթների մոտեցման մասին»,
1993թ. ապրիլի 5-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 93/13/EEC՝ «Սպառողական պայմանագրերում անազնիվ պայմանների մասին»:
[16] ՀՕ-197, 26.06.2001թ.:
[17] 1997թ. հոկտեմբերի 9-ի Խորհրդի կարգադրություն թիվ 2027/97՝ «Ուղևորների և նրանց ուղեբեռների նկատմամբ օդային առաքողների պատասխանատվության մասին»:
[18] 1998թ. մայիսի 19-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 98/27/EC՝ «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով հայցի ապահովման միջոցների մասին»,
1985թ. դեկտեմբերի 20-ի դիրեկտիվ թիվ 85/577՝ «Սպառողների պաշտպանությունը առևտրային կետերից դուրս կնքված պայմանագրերի դեպքում»:
[19] 1994թ. հոկտեմբերի 26-ի Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 94/47/EC՝ «Ժամանակավոր հիմունքներով անշարժ գույքի օգտագործման իրավունքի գնման պայմանագրերի որոշ ասպեկտների վերաբերյալ գնորդների պաշտպանության մասին»:
[20] ՀՕ-327, 20.05.2002թ.:

առևտրային կետերից դուրս կնքված պայմանագրերի դեպքում սպառողների պաշտպանությունը ապահովելու նպատակով լրացումներ և փոփոխություններ կկատարվեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում[21] և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Բացի այդ, կմշակվի «Առևտրային կետերից դուրս կնքված պայմանագրերից սպառողների պաշտպանության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելով՝ ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի ժամանակավոր հիմունքներով անշարժ գույքի օգտագործման իրավունքի գնման պայմանագրերի որոշ ասպեկտների վերաբերյալ գնորդների պաշտպանության վերաբերյալ ԵՄ դիրեկտիվին:

Զբոսաշրջային փաթեթով մատուցված ծառայությունները ԵՄ պահանջների համաձայն ապահովելու և զբոսաշրջիկների շահերը պաշտպանելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում կմշակվի «Զբոսաշրջային փաթեթների և տուրերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ[22]:

2007 թվականի ընթացքում սպառողների տնտեսական և իրավական շահերի պաշտպանության ոլորտում տեղ գտած բացերը լրացնելու նպատակով[23] ազգային օրենսդրությունում փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքներում, ինչպես նաև կմշակվի «Սպառողական ապրանքների վաճառքի և հարակից երաշխիքների որոշ խնդիրների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2008 թվական

Տարածության վրա կնքվող պայմանագրերի հետ առնչվող սպառողների պաշտպանության մասին Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1997 թվականի մայիսի 20-ի թիվ 97/7/EC դիրեկտիվին համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում և կմշակվի «Տարածության վրա կնքվող պայմանագրերի հետ առնչվող սպառողների պաշտպանության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Ինստիտուցիոնալ կարողություններ

Ընդունված իրավական ակտերի կիրարկումն ապահովելու նպատակով համապատասխան պետական իշխանության մարմինների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ և կտրամադրվի տեխնիկական օժանդակություն:

Սպառողական վարկերին վերաբերող օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովելու նպատակով դասընթացներ կկազմակերպվեն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների համար:

Սպառողների իրավունքների պաշտպանության Եվրամիության մոտեցումներն ըմբռնելու և կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համար կկազմակերպվի «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» թեմայով դասընթաց: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համար նաև կկազմակերպվի դասընթաց «Զբոսաշրջային փաթեթներ և տուրեր» թեմայով:

---

[21] ՀՕ-247, 17.06.1998թ.:

[22] 1990թ. հունիսի 13-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 90/314/ EEC՝ «Զբոսաշրջային փաթեթների և տուրերի մասին»:

[23] 1999թ. մայիսի 25-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 1999/44/EC՝ «Սպառողական ապրանքների վաճառքի և հարակից երաշխիքների որոշ խնդիրների մասին»,
1997թ. մայիսի 20-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 97/7/EC՝ «Տարածության վրա կնքվող պայմանագրերի հետ առնչվող սպառողների պաշտպանության մասին»:

3.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	• «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Սպառողական վարկերի մասին» օրենքի նախագծի մշակում	1986թ. դեկտեմբերի 22-ի «Սպառողական վարկերի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգադրությունների և վարչական դրույթների մոտեցման մասին» Խորհրդի թիվ 87/102/EEC դիրեկտիվ	ՀՀ կենտրոնական բանկ (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	4-րդ եռամսյակ	24	Փորձաքննություն
2.	«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1993թ. ապրիլի 5-ի «Սպառողական պայմանագրերում անազնիվ պայմանների մասին» Խորհրդի թիվ 93/13/EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	15	Փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		39	
			2007			
3..	«Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1997թ. հոկտեմբերի 9-ի «Ուղևորների և նրանց ուղեբեռների նկատմամբ օդային առաքողների պատասխանատվության մասին» Խորհրդի թիվ 2027/97 կարգադրություն	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն)	1-ին եռամսյակ	15	Փորձաքննություն
4.	• ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1998թ. մայիսի 19-ի «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով հայցի ապահովման միջոցների մասին» Խորհրդի թիվ 98/27/EC դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական	1-ին եռամսյակ	15	Փորձաքննություն

	• «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում		զարգացման նախարարություն)			
5.	• «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Առևտրային կետերից դուրս կնքված պայմանագրերից սպառողների պաշտպանության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1985թ.դեկտեմբերի 20-ի « Առևտրային կետերից դուրս կնքված պայմանագրերի դեպքում սպառողների պաշտպանության մասին» թիվ 85/577 դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարություն)	2-րդ եռամսյակ	15	Փորձաքննություն
6.	• ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1994թ. հոկտեմբերի 26-ի «Ժամանակավոր հիմունքներով անշարժ գույքի օգտագործման իրավունքի գնման պայմանագրերի որոշ ասպեկտների վերաբերյալ գնորդների պաշտպանության մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 94/47/EC դիրեկտիվ	ՀՀ արդարադատության նախարարություն (ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե)	2-րդ եռամսյակ	15	Փորձաքննություն
7.	«Զբոսաշրջային փաթեթների և տուրերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1990թ. հունիսի 13-ի «Զբոսաշրջային փաթեթների և տուրերի մասին» Խորհրդի թիվ 90/314/ EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	3-րդ եռամսյակ	15	Փորձաքննություն
8.	• «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1999թ. մայիսի 25-ի «Սպառողական ապրանքների վաճառքի և հարակից երաշխիքների որոշ խնդիրների մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 1999/44/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	18	Փորձաքննություն

	• «Սպառողական ապրանքների վաճառքի և հարակից երաշխիքների որոշ խնդիրների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում					
ԸՆԴԱՄԵՆԸ					93	
2008						
9.	• «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Տարածության վրա կնքվող պայմանագրերի հետ առնչվող սպառողների պաշտպանության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում •	1997թ. մայիսի 20-ի «Տարածության վրա կնքվող պայմանագրերի հետ առնչվող սպառողների պաշտպանության մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 97/7/EC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարություն)	1-ին եռամսյակ	18	Փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					18	
					150	

1.3.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[24]

0 NN ը/կ	1 Հաստատություն	2 Վերակազմակերպում	3 Վերապատրաստման կարիքներ	4 Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» դասընթացներ (2006թ 10օր)	Խորհրդատվություն, փորձաքննություն
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	«Զբոսաշրջային փաթեթների և տուրերի մասին» (2007թ. 3օր)	Խորհրդատվություն, փորձաքննություն
3.	ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	-	«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» դասընթացներ (2007թ 10օր)	Խորհրդատվություն, փորձաքննություն
4.	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ	-	«Սպառողական վարկերի մասին» դասընթացներ (2006թ. 3օր)	Խորհրդատվություն, փորձաքննություն

[24] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ:

4. Հանրային առողջապահություն

Ներածություն

Հանրային առողջապահության վերաբերյալ ԵՄ օրենսդրության ներկայացված իրավական ակտերի պահանջները հիմնականում արտացոլված չեն ՀՀ օրենսդրության մեջ, բացառությամբ ծխախոտի շրջանառությունը կարգավորող օրենսդրության:

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» և «Գովազդի մասին» ՀՀ օրենքները ներառում են ծխախոտային ապրանքների շրջանառությունը կարգավորող ԵՄ դիրեկտիվների պահանջներին համարժեք բազմաթիվ դրույթներ: Այնուամենայնիվ, ծխախոտային ապրանքների մասին տեղեկատվության տրամադրման, գովազդի, պիտակավորման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ որոշ դրույթներ նախատեսված չեն կամ նախատեսված են, սակայն չեն համապատասխանում ԵՄ օրենսդրությանը:

ՀՀ օրենսդրությունը չի կարգավորում մարդու առողջության պահպանման հետ առնչվող հետևյալ խնդիրները՝ մարդու արյան բաղադրամասերի հավաքում, փոխարկում, մշակում, պահպանում և բաշխման անվտանգություն ու որակի ստանդարտների հաստատում, մարդու հյուսվածքների և բջիջների դոնորություն, գնման փոխարկում, մշակում, պահպանում, պահեստավորում և բաշխման որակի ու անվտանգության ստանդարտների, բժշկական նպատակներով կիրառվող իոնացնող ճառագայթներից մարդու առողջության պահպանում, գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների շրջակա միջավայրի ինքնակամ բացթողնում, ճառագայթային արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման միջոցառումների և քայլերի կիրառման վերաբերյալ հանրության տեղեկացում, ինչպես նաև աղքատության հետ կապված հիվանդությունների (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, տուբերկուլյոզ և մալարիա) դեմ ուղղված պայքարին օժանդակություն:

Ծրագրով նախատեսվում է հանրային առողջապահություն բնագավառը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

Ծխախոտային ապրանքների արտադրության, ներկայացման և վաճառքի վերաբերյալ ԵՄ օրենսդրությանը[25] ազգային օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվի «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքում:

2007 թվական

Ծխախոտային ապրանքների գովազդի և հովանավորչության վերաբերյալ ԵՄ օրենսդրությանը[26] ազգային օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» և «Գովազդի մասին» ՀՀ օրենքներում[27]:

2008 թվական

2008 թվականին Ազգային ծրագրի շրջանակներում օրենսդրական համապատասխանեցման համար հիմք համարվող ԵՄ դիրեկտիվներով կարգավորվող հիմնահարցերը արտացոլված չեն ՀՀ օրենսդրությունում: Օրենսդրական համապատասխանեցումը կիրականացվի դոնորությանը վերաբերող ստանդարտների սահմանման, բժշկական նպատակներով կիրառվող իոնացնող

---

[25] 2001թ. հունիսի 5-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/37/ EC՝ «Ծխախոտային ապրանքների արտադրության, ներկայացման և վաճառքի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգադրությունների և վարչական դրույթների մոտարկման մասին»,
2003թ. մայիսի 23-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/33/EC՝ «Ծխախոտային ապրանքների գովազդի և հովանավորչության վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգավորող և վարչական դրույթների մոտարկման մասին»:

[26] 2001թ. հունիսի 5-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/37/ EC՝ «Ծխախոտային ապրանքների արտադրության, ներկայացման և վաճառքի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգադրությունների և վարչական դրույթների մոտարկման մասին»,
2003թ. մայիսի 23-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/33/EC՝ «Ծխախոտային ապրանքների գովազդի և հովանավորչության վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգավորող և վարչական դրույթների մոտարկման մասին»:

[27] ՀՕ-72, 24.12.2004թ.:
ՀՕ-55, 30.04.1996թ.:

ճառագայթումից մարդու առողջության պահպանման, ինչպես նաև մարդու արյան և արյան բաղադրամասերին վերաբերող ստանդարտների սահմանման բնագավառներում[28]:

Վերոհիշյալ ոլորտներում ԵՄ օրենսդրական պահանջներն ապահովելու և ազգային օրենսդրության այս ոլորտի բացը լրացնելու նպատակով կմշակվեն «Մարդու հյուսվածքների և բջիջների դոնորության, գնման, փորձարկման, մշակման, պահպանման, պահեստավորման և բաշխման որակի և անվտանգության ստանդարտների սահմանման մասին», «Բժշկական նպատակներով կիրառվող իոնացնող ճառագայթումից մարդու առողջության պահպանման մասին» և «Մարդու արյան և արյան բաղադրամասերի հավաքման, փորձարկման, մշակման, պահպանման և բաշխման անվտանգության և որակի ստանդարտների հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծեր:

ԵՄ պահանջներին համապատասխան՝ հասարակությանը ճառագայթային արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովելու նպատակով[29] կմշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ճառագայթային արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման միջոցառումների և քայլերի կիրառման վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու մասին:

Ինստիտուցիոնալ կարողություններ

ՀՀ առողջապահության նախարարությանը ԵՄ հանրային առողջապահության ոլորտի խնդիրներին և գործունեությանը ծանոթացնելու նպատակով նախարարության մասնագետների համար կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ՝ ընդունված օրենսդրության կիրարկումն ապահովելու նպատակով: Դասընթացների թեմաներն են՝ «Մարդու հյուսվածքների և բջիջների դոնորության, գնման, փորձարկման, մշակման, պահպանման, պահեստավորման և բաշխման որակի և անվտանգության ստանդարտների սահմանման մասին» (2007թ. 3օր), «Բժշկական նպատակներով կիրառվող իոնացնող ճառագայթումից մարդու առողջության պահպանման մասին» (2007թ. 3օր), «Մարդու արյան և արյան բաղադրամասերի հավաքման, փորձարկման, մշակման, պահպանման և բաշխման անվտանգության և որակի ստանդարտների հաստատման մասին» (2007թ. 3օր), «Ճառագայթային արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման միջոցառումների և քայլերի կիրառման վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու մասին» (2008թ. 3օր):

---

[28] 2004թ. մարտի 31-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2004/23/EEC՝ «Մարդու հյուսվածքների և բջիջների դոնորության, գնման, փորձարկման, մշակման, պահպանման, պահեստավորման և բաշխման որակի և անվտանգության ստանդարտների սահմանման մասին»,
1997թ. հունիսի 30-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 97/43/Euroatom՝ «Բժշկական նպատակներով կիրառվող իոնացնող ճառագայթումից մարդու առողջության պահպանման և թիվ 84/466/ Euroatom դիրեկտիվի ուժը կորցնելու մասին»,
2003թ. հունվարի 27-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2002/98/EC՝ «Մարդու արյան և արյան բաղադրամասերի հավաքման, փորձարկման, մշակման, պահպանման և բաշխման անվտանգության և որակի ստանդարտների հաստատման և թիվ 2001/83/EC դիրեկտիվում փոփոխություններ կատարելու մասին»:

[29] 1989թ. նոյեմբերի 27-ի դիրեկտիվ թիվ 89/618/Euroatom՝ «Ճառագայթային արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման միջոցառումների և քայլերի կիրառման վերաբերյալ հանրությանը տեղեկացման մասին»:

4.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2006						
1.	2004թ դեկտեմբերի 24-ի «Ծխախոտի իրացման,սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» թիվ ՀՕ-72-Ն ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2001թ. հունիսի 5-ի «Ծխախոտային ապրանքների արտադրության, ներկայացման և վաճառքի վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգադրությունների և վարչական դրույթների մոտարկման մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2001/37/ EC դիրեկտիվ	ՀՀ առողջապահություն նախարարություն	4-րդ եռամսյակ	15	Փորձաքննություն
					15	
2007						
2.	• 2004թ դեկտեմբերի 24-ի «Ծխախոտի իրացման,սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» թիվ ՀՕ-72-Ն ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • 1996թ. ապրիլի 30-ի «Գովազդի մասին» թիվ ՀՕ-55 ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	2003թ. մայիսի 23-ի «Ծխախոտային ապրանքների գովազդի և հովանավորչության վերաբերյալ անդամ երկրների օրենքների, կարգավորող և վարչական դրույթների մոտարկման մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2003/33/EC դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն	1-ին եռամսյակ	15	Փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	
2008						

3.	«Մարդու հյուսվածքների և բջիջների դոնորության, գնման, փորձարկման, մշակման, պահպանման, պահեստավորման և բաշխման որակի և անվտանգության ստանդարտների սահմանման մասին» կառավարության որոշման նախագծի մշակում	2004թ. մարտի 31-ի «Մարդու հյուսվածքների և բջիջների դոնորության, գնման, փորձարկման, մշակման, պահպանման, պահեստավորման և բաշխման որակի և անվտանգության ստանդարտների սահմանման մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2004/23/EEC դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն	1-ին եռամսյակ	54	Փորձաքննություն
4.	«Բժշկական նպատակներով կիրառվող իոնացնող ճառագայթումից մարդու առողջության պահպանման մասին» կառավարության որոշման նախագծի մշակում	1997թ. հունիսի 30-ի «Բժշկական նպատակներով կիրառվող իոնացնող ճառագայթումից մարդու առողջության պահպանման և թիվ 84/466/ Euroatom դիրեկտիվի ուժը կորցնելու մասին» Խորհրդի թիվ 97/43/Euroatom դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն	2-րդ եռամսյակ	24	Փորձաքննություն
5.	«Մարդու արյան և արյան բաղադրամասերի հավաքման, փորձարկման, մշակման, պահպանման և բաշխման անվտանգության և որակի ստանդարտների հաստատման մասին» կառավարության որոշման նախագծի մշակում	2003թ. հունվարի 27-ի «Մարդու արյան և արյան բաղադրամասերի հավաքման, փորձարկման, մշակման, պահպանման և բաշխման անվտանգության և որակի ստանդարտների հաստատման և թիվ 2001/83/EC դիրեկտիվայում փոփոխություններ կատարելու մասին» Խորհրդի թիվ 2002/98/EC դիրեկտիվ	ՀՀ առողջապահության նախարարություն	2-րդ եռամսյակ	36	Փորձաքննություն
6.	«Ճառագայթային արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման միջոցառումների և քայլերի կիրառման վերաբերյալ հանրությանը տեղեկացման մասին» կառավարության որոշման նախագծի մշակում	1989թ. նոյեմբերի 27-ի «Ճառագայթային արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման միջոցառումների և քայլերի կիրառման վերաբերյալ հանրությանը տեղեկացման մասին» թիվ 89/618/Euroatom դիրեկտիվ:	Հայաստանի փրկարար ծառայություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	3-րդ եռամսյակ	15	Փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**129**	
					159	

4.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[30]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
	ՀՀ առողջապահություն նախարարություն		• «Մարդու հյուսվածքների և բջիջների դոնորության, գնման, փորձարկման, մշակման, պահպանման, պահեստավորման և բաշխման որակի և անվտանգության ստանդարտների սահմանման մասին» դասընթացներ (2008թ. 3օր) • «Բժշկական նպատակներով կիրառվող իոնացնող ճառագայթումից մարդու առողջության պահպանման մասին» (2008թ. 3օր) • «Մարդու արյան և արյան բաղադրամասերի հավաքման, փորձարկման, մշակման, պահպանման և բաշխման անվտանգության և որակի ստանդարտների հաստատման մասին» (2008թ. 3օր) • «Ճառագայթային արտակարգ իրավիճակներում առողջության պահպանման միջոցառումների և քայլերի կիրառման վերաբերյալ հանրությանը տեղեկացման մասին» (2008թ. 3օր)	Խորհրդատվություն, փորձաքննություն

[30] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ: